«ԵՐԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

ՊՈԱԿ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (2021-2026թթ.)

ԵՐԵՎԱՆ 2021

Հաստատված է «Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի կողմից -2021թ
(արձանագրություն № 8)

«ԵՐԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (2021-2026թթ.)

Ռազմավարական ծրագիրը ներկայացնում է Երևանի մշակույթի պետական քոլեջի, Երևանի էստրադային և ջազային արվեստի պետական քոլեջի միաձուլման արդյունքում ստեղծված Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջի կողմից նպատակների և խնդիրների շարունակման ողջ գործունեությունը, իրականացման անհրաժեշտ քայլերը և գնահատման արդյունավետ նոր ցուցանիշերը:

Ծրագիրը հնարավորություն կտա երկու քոլեջներում կուտակված փորձի, ժամանակակից մարտահրավերների և բարեփոխումների հիման վրա արդյունավետ կազմակերպել նորաստեղծ քոլեջի գործունեության ներկան, նախաձեռնել առավել նպաստավոր և մրցունակ ապագան, ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ երկրի սահմաններից դուրս մշակույթին կրթության կազմակերպման ոլորտում:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ----------4
«ԵՐԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ
ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ----------4

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ----------7

1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ----------7
2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ----------9
3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ----------10
4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------11
5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ----------12
6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ----------13

ՔՈԼԵՋԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

«Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը միջին մասնագիտական ուսումնական հաստատություն է, որի հիմնական առաքելությունը մշակույթի և արվեստի ոլորտում այնպիսի մասնագետներ պատրաստելն է, որոնք իրենց մասնագիտական գիտելիքներով, կարողություններով և պրակտիկ հմտություններով կարձագանքեն առկա մարտահրավերներին՝ համապատասխան գործողություններով աջակցելով ՀՀ և համաշխարհային մշակույթի զարգացմանն ու կայացմանը:

ՔՈԼԵՋԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

«Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը(այսուհետ՝ Քոլեջ) ձգտում է դառնալ ազգային և միջազգային միջին մասնագիտական ուսումնական հաստատություն, որը՝

▪Ձգտում է զարգացնել իր գերակա ուղղությունները և մրցակցային առավելությունները՝ ինտեգրել ժամանակակից արվեստի և մշակույթի տիրույթում առանձնահատուկ մոտեցումներ՝ դրանք ներդնելով կրթական գործունեության մեջ, ապահովելով գիտելիքների փոխանցումը տարբեր շահակիցներին:

▪Կլինի հասանելի, մատչելի և նախընտրելի միջին մասնագիտական ուսումնական հաստատություն հասարակության ամենատարբեր շերտերի համար՝ անկախ տարիքից, սեռից, ռասսայական ու ազգային պատկանելիությունից, համոզմունքներից և քաղաքական նախասիրություններից:

▪Ունի գործուն, արդյունավետ կառավարում ու վարչարարություն, անհրաժեշտ ենթակառուցվածքներ, թերևս ոչ լիարժեք ուսումնական և լաբորատոր բազա, որի համալրումը կնպաստի կրթության որակի անընդհատ ու շարունակական բարելավմանը:

▪Միջոցներ է ձեռնարկում ուսումնական գործընթացները առավել արդյունավետ և բազմազան դարձնելու նպատակով բարելավելու շենքային և գույքային պայմանները, նպաստելով նրա ժամանակակից կրթական միջավայր դառնալուն:

- Մոտ ապագայում քոլեջը Շառլ Ազնավուրի անվամբ անվանակոչման գործընթաց կիրականացնի որը ևս կարևոր գործոն կդառնա քոլեջի զարգացման գործում:

«ԵՐԵՎԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի ՄՆԱՅՈՒՆ ԱՐԺԵՔՆԵՐԸ

Այսօր ՀՀ-ում արդիական են մշակութային ինչպես բարձրագույն, այնպես էլ միջին մասնագիտական կրթության համակարգի բարեփոխումները, և որքան շուտ սկսվեն բարեփոխումների գործնական իրականացումը, այնքան արագ կկարողանանք արձանագրել, որ ՀՀ միջին մասնագիտական կրթության համակարգն արժանի կերպով միացել է համաշխարհային կրթական համակարգին: Յուրաքանչյուր միջին մասնագիտական ուսումնական հաստատության բնութագրական առանձնահատկությունը

որոշվում է այն արժեքներով, որոնց դավանում են նրա շահակիցները: Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի համար այդ արժեքներն այն հիմնարար սկզբունքներն են , որոնք դրված են նրա գործունեության հիմքում:

1. Քոլեջի ներկա վիճակը

Քոլեջում ներկայումս իրականացվում են միջին մասնագիտական 11 կրթական ծրագրեր՝ հիմնական/ընդհանուր/ և միջնակարգ/լրիվ/ ընդհանուր կրթական հիմքի վրա՝

- 0211.01.05 «Ռեժիսուրա» - մասնագետի որակավորումը՝ ռեժիսոր,
- 0215.01.05 «Երգեցողություն»- մասնագետի որակավորումը՝ երգիչ,
- 0212.02.5- «Հագուստի մոդելավորում և նախագծում» - մասնագետի որակավորումը՝ հագուստի մոդելավորող-նախագծող
- 0213.04.5 «Արվեստի ստեղծագործությունների վերականգնում, կոնսերվացում և պահպանում»- մասնագետի որակավորումը՝ վերականգնող-կոնսերվացնող արվեստի ստեղծագործությունների,
- 0211.03.5 «Լուսանկարչական գործ»- մասնագետի որակավորումը՝ լուսանկարիչ,
- 0215.07.5 «Դերասանական արվեստ»- մասնագետի որակավորումը՝ դերասան,
- 0215.05.5 «Պարարվեստ»- մասնագետի որակավորումը՝ դերասան՝համույթի,
- 0215.06.5 «Գործիքային կատարողական արվեստ»- մասնագետի որակավորումը՝ երաժիշտ, կատարող,դասավանդող/ըստ գործիքների տեսակների/,
- 0215.04.5 «Էստրադային արվեստ»- մասնագետի որակավորումը՝ դերասան՝ էստրադայի,
- 1012.02.5 «Կոսմետիկա և դիմահարդարման արվեստ»- մասնագետի որակավորումը՝ կոսմետոլոգ,
- 0411.01.5 «Հաշվապահական հաշվառում»- մասնագետի որակավորումը՝ հաշվապահ:

Կառուցվածքային կոլեգիալ ղեկավար մարմիններն են՝ Կառավարման խորհուրդ և Մանկավարժական խորհուրդ:

Կառուցվածքային ստորաբաժանումներն են՝ ուսումնական մասը, , հաշվապահությունը, կարիերայի բաժինը, Ուսանողական խորհուրդը, ուսանողների ընդհանուր ժողովը, գրադարանը և մասնագիտական ամբիոնները՝

- «Հանրակրթական առարկաների» ամբիոն,
- «Մշակույթի» ամբիոն,
- «Արվեստի» ամբիոն,
- «Երաժշտության» ամբիոն,
- «Սոցիալ-տնտեսագիտական, հումանիտար և ընդհանուր բնագիտական առարկաների» ամբիոն:

Նշված վարչական և ուսումնաօժանդակ ստորաբաժանումներն ունեն իրենց կանոնադրությունները, կանոնակարգերը, ընթացակարգերը, աշխատանքային պլանները, ինչպես նաև Քոլեջում տարվող աշխատանքների համար պահանջվող համապատասխան փաստաթղթերը:

Քոլեջի ուսումնական, լաբորատոր և գործնական աշխատանքներն իրականացնելու նպատակով օգտագործվում են քոլեջում առկա ներքին և արտաքին ռեսուրսները, որոնք ունեն բարելավման կարիք:

Քոլեջի կառավարումն իրականացվում է համալիր ձևով, որի արդյունավետության բարձրացմանն են ուղղված քոլեջի ստորաբաժանումների աշխատանքները: Քոլեջի կառավարման համակարգի հիմնական ուղղություններն են՝ ուսումնական գործընթացը, ուսանողների ընդունելությունը, որակի ապահովումը, ֆինանսների կառավարումը, նյութատեխնիկական բազայի արդիականացումն ինչպես նաև նոր արվեստանոցների և լաբորատորիաների ստեղծումը, ստորաբաժանուների աշխատանքների գնահատումը և բարելավումը:

2. Կրթական գործունեություն

Քոլեջը կարևորում է յուրաքանչյուր կարողունակ անձի՝ հանրակրթական և միջին մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունը, ուսանողներին մատուցում բարձրորակ, մատչելի կրթություն, տրամադրում անհրաժեշտ խորհրդատվություն: Քոլեջը համագործակցում է ոլորտի մի շարք մասնագիտական կազմակերպությունների հետ, որոնցում կարող են զուգահեռվել երկուստեք ռազմավարություն ունեցող ոլորտներ: Մշակվում են անհրաժեշտ ուսումնամեթոդական նյութեր, ուսանողների գիտելիքների ստուգումը, գնահատումը և բողոքարկումը իրականացվում է միասնական ընթացակարգով:

3. Կադրային ներուժի զարգացում

Քոլեջի կադրային ներուժը հիմնականում համապատասխանում է լիցենզիայի պահանջներին: ՄԿԾ-ի իրականացման գործընթացում ընդգրկված են ոչ միայն բարձր որակավորում ունեցող մասնագետները, այլ նաև հրավիրված մասնագետներ: Քոլեջի դասախոսական կազմը համալրված է մեծ մասամբ հիմնական կադրերով, որոնց ընտրութունը կատարվում է գործող ընթացակարգերով և տնօրենի առաջարկությամբ: Դասախոսների ընտրության հարցում մեծ տեղ է տրվում բանիմաց մասնագետներին:

4. Ուսուցման որակ՝ եվրոպական չափանիշով

Ուսուցման որակը շարունակում է մնալ Քոլեջի հիմնական առաջնահերթությունը: Ուսուցման որակի ապահովման համար ակտիվ համագործակցում ենք ոլորտի կազմակերպությունների, անհատների և փորձագետների և հետ: Այդ նպատակով Քոլեջում կրթության որակի ապահովման և գնահատման համար գործում է համապատասխան հաստիք:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԻՐԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

1. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 1.1 Ապահովել ստորաբաժանումների միջև լիազորությունների և պարտականությունների արդյունավետ եւ հստակ բաշխվածություն:

Խնդրի իրագործման գործողություններ	*Առաջընթացի գնահատման ցուցանիշներ*
1.Բարելավել քոլեջի կառավարման կառուցվածքային ստորաբաժանումների գործառույթները, ինչպես նաև վերանայել կազմակեպական կառուցվածքը: 2. Մշակել և ներդնել Քոլեջի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման ամբողջական համակարգ՝ պարբերաբար իրանացվող հստակ մեխանիզմներով և չափելի գործիքներով: 3. Ներդնել ռիսկերի բացահայտման և կառավարման համակարգ: 4. Հստակեցնել Քոլեջի ֆինանսական ռեսուրսների բաշխման քաղաքականությունը՝ ըստ ռազմավարական գերակայությունների:	1.Քոլեջի կառավարման մարմինների հստակեցված գործառույթներ /2021-2022թթ ուստարվանից նոր կառուցվածքային սխեմա և գործող պաշտոնի անձնագիր/: 2.Քոլեջի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության ուղեցույց/SWOT վերլուծությաւն/: 3.Ռիսկերի բացահայտման և կառավարման գործող ընթացակարգ: 4.Ֆինանսների բաշխման գործող նոր քաղաքականություն/2023-2024 ուստարվանից ըստ ՌԶԾ-ի նպատակների բյուջեով ֆինանսական միջոների հատկացում/:

Խնդիր 1.2 Քոլեջի մանկավարժական համակազմի գործունեության արդյունավետության բարձրացում:

Խնդրի իրագործման գործողություններ	*Առաջընթացի գնահատման ցուցանիշներ*
1.Բարելավել մանկավարժական համակազմի մասնագիտական գործունեությունը: 2. Բարելավել գործնական (պրակտիկ) պարապմունքները: 3.Վերանայել ուսումնաարտադրական և նախաավարտական պրակտիկաների ծրագրերը, բարձրացնել մեթոդիստների դերը: 4.Մշակել և ներդնել էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգ քոլեջի կառավարման ոլորտում: 5.Բարելավել որոշումների կայացման գործընթացում արտաքին և ներքին շահակիցների ներգրավման մեխանիզմները:	1.Մշակված և գործող դասախոսական համակազմի վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացների կազմակեպում /2020-2021 ուստարվանից սկսած/: 2.Արդիականացված և կահավորված տարեկան առնվազն մեկ մասնագիտական կաբինետ քոլեջի ֆինանսական միջոցներից կամ այլ ֆինանսական ներդրումների ներգրավման միջոցով: 3.Ոլորտի կազմակերպությունների հետ պայմանագրերի և հուշագրերի կնքման միջոցով մեծացնել պրակտիկայի կազմակերպման հարթակների հնարավորությունները 2021 -2022 5.Կառավարման բոլոր մակարդակներում ներքին և արտաքին շահակիցների նեգրավում :

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 2.1 Ուսումնական գործընթացի բարելավում:

Խնդրի իրագործման գործողություններ	*Առաջընթացի գնահատման ցուցանիշներ*
1.Մշակել ըստ ՊԿՉ-ի մասնագիտությունների ՄԿԾ-ի փաթեթներ: 2.Վերանայել գործող առարկայական/մոդուլային դասընթացների ծրագրերը: 3.Կազմակերպել և իրականացնել մասնագիտական կողմնորոշման գործընթացներ: 4. Բարելավել դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները: 5.Բարելավել ամփոփիչ ատեստավորման քննությունները՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին ցուցադրելու իրենց հմտությունները գործնականում: 6.Ընդլայնել համագործակցությունը տեղական և արտասահմանյան ուսումնական հաստատությունների և կազմակերպությունների հետ, կնքել համապատասխան պայմանագրեր: 7.Կազմակերպել տարբեր միջոցառումներ օտարերկրյա դիմորդների ընդունելության ապահովման ուղղությամբ:	1.Մշակված և հաստատված ՄԿԾ-ի/ամբողջական մեկնարկը առնվազն 2021-2022 ուստարի/: 2.Վերանայված և մշակված նոր առարկայական դասընթացների ծրագրեր ըստ ուսումնական պլանների ամբողջական մեկնարկը առնվազն 2021-2022 ուստարի/: 3.Շահակից կառույցների հետ՝ դպրոց, վարժարան փոխադարձ հանդիպումների կազմակերպում, որոնք կլինեն քոլեջի մասին տեղեկատվության ներկայացման, մշակութային միջոցառումների, ժամանցի կազմակերպմամբ, ինչպես նաև վարպետության դասերի կազմակերպում: 4.Հաստատված և գործող դասալսումների անցկացման և քննարկման նոր կարգ/տարեկան առնվազն 3 դասալսումների հաշվետվություններ, բարելավման խորհրդատվություններ/: 5.Վերանայված գործող ամփոփիչ ատեստավորման կարգ/Հանձնաժողովների նախագահների տարեկան հաշվետվություններ, բարելավման ծրագրեր, քննական հարցաշարեր և տոմսեր(յուրաքանչյուր տոմսում առնվազն մեկ գործնական հմտությունների հարց)/: 6.Մինչև ծրագրի ավարտը համագործակցության գործող առնվազն 3 պայմանագիր կամ հուշագիր: 7.Մինչ ծրագրի ավարտը աշխատանքներ իրականացնել կրթական ծրագրերի փորձարկման ուղղությամբ:

3.ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Խնդիր 3.1 Համալրել և արդիականացնել նյութատեխնիկական ռեսուրսները:

Խնդրի իրագործման գործողություններ	*Առաջընթացի գնահատման ցուցանիշներ*
1.Իրականացնել նյութատեխնիկական բազայի արդիականացման գործընթաց, գնահատելով նյութատեխնիկական ռեսուրսների առկա վիճակը: 2.Իրականացնել լսարանների, մասնագիտացված կաբինետների լաբարատորիաների վերանորոգման ու կահավորման գործընթաց: 3. Պարբերաբար արդիականացել տեխնիկական ու տեղեկատվական միջոցները, բարձրացնել համացանցի արագությունը և ապահովել ազատ մուտք համացանց: 4.Մշակել ֆինանսական հավելյալ աղբյուրների ներգրավման մեխանիզմներ: 5.Բազմազանեցնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմները՝ շարունակաբար վերլուծելով արդյունքները և պլանավորել բարելավումներ: 6.Քոլեջի շենքի ընթացիկ նորոգման և հիմնանորոգման աշխատանքների պլանավորում:	1.Առկա ռեսուսների գնահատման վերաբերյալ զեկույց:/2020-2024 ուստարի նյութատեխնիկական բազայի բարելավման միջնաժամկետ և երկարաժամկետ պլանավորում,(տարեկան բյուջեի նախագիծ)/: 2.Ուսումնական մասնաշենքի, լսարանների և լաբարատոր կաբինետների վերանորոգման հատկացված ֆինանսական միջոցներ բյուջեով և այլ ներդրումային միջոցներից: 3.Համացանցից օգտվելու լայն հնարավորություն (Wi-Fi տիրույթ ամբողջ Քոլեջում): 4.Ֆինանսական հոսքերը խթանող ծրագրերի մշակում և իրականացում: 5.Մշակված և հաստատված տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման ընթացակարգ/լրամշակված հարցաթերթիկներ, տարեկան հարցումների արդյունքների վերլուծություն/2023-2024ուստարվանից: 6. 2021 թվականից բյուջետային և արտաբյուջետային միջոցներից, ինչպես նաև այլ ներդրողների ներգրավմամբ:

4.ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Խնդիր 4.1 Ընդլայնել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական և աջակցման ծառայություններ:

Խնդրի իրագործման գործողություններ	*Առաջընթացի գնահատման ցուցանիշներ*
1.Համակարգել ուսանողների հավաքագրման գործընթացները՝ զարգացնել քոլեջի պաշտոնական վեբ կայքը: 2. Համակարգել ուսանողներին տրամադրվող խորհրդատվական ծառայությունները՝ հստակ ժամանակացույց և մշակելով ընթացակարգեր: 3.Բազմազանեցնել ուսանողների կրթական, խորհրդատվական ծառայությունների գնահատման և որակի ապահովման մեխանիզմներ: 4. Ակտիվացնել ՈւԽ աշխատանքները , խրախուսել ուսանողների կողմից միջոցառումների կազմակերպման նախաձեռնությունները, միջոցառումների կազմակերպումը դարձնել բազմաբնույթ: 5.Ապահովել ուսանողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը քոլեջի կառավարմանը: 6. Ապահովել ուսանողների իրազեկվածության աստիճանն իրենց իրավունքների և պարտականությունների իմացության ոլորտում:	1.Առնվազն 2021-2022 ուստարվա 2-րդ կիսամյակից քոլեջի վերաբրենդավորված պաշտոնական վեբ կայք: 2. Մշակված և հաստատված ուսանողների կրթական կարիքների վերհանման և գնահատման ընթացակարգ /հաստատված խորհրդատվական ծառայությունների ժամանակացույց, ուսանողների կողմից բավարարվածության վերաբերյալ զեկույց/: 3.Ուսանողների կրթական կարիքների վերահանման և գնահատման գործող նոր ընթացակարգ /մշակված հարցաթերթիկներ, հանդիպումների ժամանակացույց (տարեկան առնվազն երկու հանդիպում) ամփոփված արդյունքների հիման վրա բարելավման պլան /: 4.Արտալսարանային միջոցառումներ: 5.Կառավարման մարմիններում ուսանողների ներգրավվածություն/գործող հանձնաժողովներում առնվազն մեկ ուսանողի առկայություն, նիստերի արձանագրություններ/: 6. Ուասնողների շրջանում տեղեկատվության բարձրացում, միջոցառումների կազմակերպում՝ յուրաքանչյուր կիսամյակ առնվազն երկու հանդիպում

5.ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Խնդիր 5.1 Ընդլայնել միջազգայնացման և փորձի փոխանակմանը միտված հստակ միջոցառումներ:

Խնդրի իրագործման գործողություններ	*Առաջընթացի գնահատման ցուցանիշներ*
1.Ակտիվացնել տեղական և միջազգային կրթական կազմակերպությունների հետ ինստիտուցիոնալ համագործակցությունը (դասախոսների վերապատրաստում,համատեղ ծրագրերի ու միջոցոռումների իրականացում)՝ ապահովելու քոլեջի ռազմավարությամբ ամրագրված նպատակների իրականացումը: 2. Որոնել միջազգային դրամաշնորհային ծրագրեր՝ քոլեջի միջազգային տեսանելիության բարձրացման նպատակով:	1.Գործող քաղաքականություն 2. Դրամաշնորհային հավանական հիմնադրամների և կազմակերպությունների ցանկ/առնվազն մեկ ծրագրի նախագիծ /:

6. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Խնդիր 6.1 Քոլեջում որակի ապահովման մշակույթի կատարելագործում:

Խնդրի իրագործման գործողություններ	*Առաջընթացի գնահատման ցուցանիշներ*
1.Հիմնել և զարգացնել Քոլեջի ՈՆԱ քաղաքականությունն ու գործունեությունը և ռազմավարական նպատակները: 2 Մշակել ՈԱ ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտ ընթացակարգեր, դրանց գնահատման և արդյունավետության չափման մեխանիզմներ՝ բարելավելով ՈՆԱ համակարգը և մեխանիզմները: 3. Մշակել հետադարձ կապի առավել արդյունավետ մեխանիզմներ: 4. Ապահովել ՈԱ գործընթացներում ընդգրկված անձնակազմի պարբերական վերապատրաստման դասընթացների իրականացումը: 5.Ստեղծել ՈԱ պատասխանատուի և ստորաբաժանումների միջև համագործակցություն՝ նպաստելով ՈԱ գործընթացների վերաբերյալ համընդհանուր ընկալման և իրազեկվածության բարձրացմանը:	1.Հաստատված ՈՆԱ քաղաքականություն և ընթացակարգեր/ 2. Գործող ՈԱ քաղաքականության գնահատման գործիքներ/հարցումների անցկացման կարգ, գնահատման հաշվետվություն, բարելավման պլան: 3.Գործող հետադարձ կապի հստակեցման մեխանիզմ/ 4. Կարիքի ուսումնասիրում և ըստ անհրաժեշտության վերապատումների կազմակերպում: 5.Շահակիցների միջև մատչելի և պարբերական կապի ապահովում